

1. Ի Ր Ա Կ Ա Ն Հ Ա Տ Վ Ա Ծ

1.1. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ

ԼՂՀ համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) 2009թ. կազմել է 102338.7 մլն դրամ՝ 2008թ. 87148.1 մլն դրամի դիմաց: ՀՆԱ-ի հավելաճի տեմպը կազմել է 13.1 տոկոս, ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորը՝ 3.9 տոկոս:

2009թ. մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, ընթացիկ գներով, կազմել է 723.7 հազ. դրամ, 1992.2 ԱՄՆ դոլար կամ 1426.4 Եվրո՝ 2008թ. 623.1 հազ. դրամի կամ 2036.5 ԱՄՆ դոլարի և 1383.9 Եվրոյի դիմաց:

Արտադրված համախառն ներքին արդյունքի կառուցվածքը

	<i>/ընթացիկ շուկայական գներով, մլն դրամ/</i>				
	2008թ.	2009թ.	իրական հավելաճի տեմպը (տոկոսներով)	ՀՆԱ-ի կառուցվածքը (տոկոսներով)	
				2008թ.	2009թ.
Համախառն ներքին արդյունք	87148.1	102338.7	13.1	100.0	100.0
Ապրանքների արտադրություն	34667.6	42311.6	11.1	39.8	41.4
այդ թվում՝					
Արդյունաբերություն	12076.9	16788.7	16.6	13.9	16.4
Անտառային տնտեսություն	227.6	227.1	-13.6	0.3	0.2
Գյուղատնտեսություն	13777.4	13952.1	1.6	15.8	13.7
Շինարարություն	8585.7	11343.7	19.1	9.8	11.1
Ծառայությունների արտադրություն	47084.9	54983.7	17.5	54.0	53.7
այդ թվում՝					
Շուկայական ծառայություններ	20257.0	27296.6	34.0	23.2	26.7
որից՝					
Տրանսպորտ և կապ	6012.7	7449.9	27.1	6.9	7.3
Առևտուր և հանրային սնունդ	6425.3	7184.1	16.9	7.4	7.0
Ոչ շուկայական ծառայություններ	26827.9	27687.1	5.1	30.8	27.0
Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններ (-)*	2345.8	3283.2	32.7	2.7	3.2
Ապրանքների գուտ հարկեր	7741.4	8326.6	-1.1	8.9	8.1

ՀՆԱ-ի իրական աճի վրա դրական ազդեցություն են ունեցել և ապրանքների, և ծառայությունների արտադրության ոլորտները՝ համապատասխանաբար 11.1 և 17.5 տոկոս:


ՀՆԱ-ի արձանագրված 13.1 տոկոս հավելաճի տեմպի 2.8 տոկոսային կետն ապահովել է ֆինանսներ և վարկը, 2.3-ը՝ արդյունաբերությունը, 1.9-ական տոկոսային կետերը՝ շինարարությունը, տրանսպորտ և կապը:

Կառուցվածքային տեսանկյունից 2009թ. նախորդ տարվա համեմատ 1.6 տոկոսային կետով աճել է ապրանքների արտադրության ոլորտի ավելացված արժեքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ:

Ի հակառակ դրա ՀՆԱ-ի մեջ 0.3 տոկոսային կետով նվազել են ծառայությունների արտադրության ոլորտի, 0.8 տոկոսային կետով՝ ապրանքների գուտ հարկերի ավելացված արժեքների տեսակարար կշիռները:

* Ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայություններն իրենցից ներկայացնում են ֆինանսական միջնորդների բանկային գործարքների ստացած և վճարած տոկոսների տարբերությունը: Քանի որ, գործնականորեն անհնար է անտեսել այդ ծառայություններն ըստ ճյուղերի, այդ իսկ պատճառով ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունների ողջ ծավալը գրանցվում է որպես պայմանականորեն ընդունված ինչ-որ ճյուղի միջանկյալ սպառում, որի թողարկումը հավասարեցվում է 0-ի, համապատասխանաբար ավելացված արժեքը հանդիսանում է բացասական մեծություն, այսինքն, ընդհանուր տնտեսության մակարդակով համախառն ավելացված արժեքների գումարը (ՀՆԱ) նվազեցվում է այդ մեծության չափով :

Համախառն ներքին արդյունքի դինամիկան (նախնական)
ըստ եռամսյակների (մլն դրամ)



ՀՆԱ-ի եռամսյակային կառուցվածքի դիտարկումը ցույց է տալիս, որ 2009թ. երկրորդ կիսամյակում արտադրվել է ՀՆԱ-ի գերակշռող մասը 58.3 տոկոսը նախորդ տարվա 59.5 տոկոսի փոխարեն:

Համախառն ներքին արդյունքի կառուցվածքը՝ ըստ եռամսյակների

	2008թ.	2009թ.
Ընդամենը	100.0	100.0
I եռամսյակ	16.2	16.9
II եռամսյակ	24.3	24.8
I կիսամյակ	40.5	41.7
III եռամսյակ	27.5	26.0
IV եռամսյակ	32.0	32.3
II կիսամյակ	59.5	58.3